600.0404.20.09.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2017 թվականի №404Ա
քաղ. Երևան

«ՅՈՒՆԻԳԱՐԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2003 թվականի օգոստոսի 13-ին «ՅՈՒՆԻԳԱՐԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է №ԳՌՑ-0173 թույլտվությունը, որի գործողության ժամկետը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի օգոստոսի 13-ի №453Ա որոշմամբ երկարաձգվել է, և այն շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականությունների օգտագործման №0424 թույլտվություն),

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

գ) ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 10-ի №ԱԲ-002Հ, ապրիլի 4-ի №ԱԲ-792Հ և հուլիսի 6-ի №ԱԲ-1773Հ գրություններով,

դ) ընկերության կողմից օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2017 թվականի օգոստոսի 25-ին Հանձնաժողովը

վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2017 թվականի օգոստոսի 25-ի №ԱԲ-2244Հ գրությամբ,

ե) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերությունը խախտել է օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, որը 2017 թվականի սեպտեմբերի 20-ի դրությամբ կազմում է 259 300 (երկու հարյուր հիսունինը հազար երեք հարյուր) դրամ, որից 200 000 (երկու հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 59 300 (հիսունինը հազար երեք հարյուր) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և

հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել №0424 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ը հաշվարկված 259 300 (երկու հարյուր հիսունինը հազար երեք հարյուր) դրամ պարտքը, որից 200 000 (երկու հարյուր հազար) դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 59 300 (հիսունինը հազար երեք հարյուր) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ___ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
20 սեպտեմբերի 2017թ.